

# Սփիւռֆահայ նոր պարբերական մամուլը 1967-1980 թթ.ում (ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ)

ԺԻՐԱՅԻ ԳԱՆԻԷԼԵԱՆ

1970-1980 թթ.-ու միջև երկարող տասնամեայ ժամանակամիջոցին, ու յատկապէս այդ տասնամեակի երկրորդ կէսի տարիներուն, ընկերային, տնտեսական ու քաղաքական տարրեր պատճառներով, հայ պարբերական մամուլը թուական մեծ աճ ապրեցաւ Սփիւռքի մէջ:

1960-ական թուականներէն սկսած, արտագաղթի զրալի շարժում մը ծայր տուաւ Միջին Արեւելքի արարական երկիրներու հասոն զաղութներէն: Արտագաղթը, հիմնականին մէջ կը թելագրուէր յիշեալ երկիրներու քաղաքական ու տնտեսական անկայուն կացութենէն: Սակայն արտագաղթը մեծ համեմատութիւններու հասաւ յատկապէս 1975 թուականին սկսած եւ տակաւին շարունակուող Լիբանանի քաղաքացիական պատերազմին, եւ Իրանի մէջ կատարուած յեղաշրջումին պատճառով: Բաղմահազար ընտանիքներ, Ֆիզիքական ու տնտեսական ազահոլութեան հետամուտ, գաղթեցին եւրոպական եւ ամերիկեան երկիրներ, յատկապէս՝ Պրանսա, Անգլիա, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Գանատա, ինչպէս նաեւ Աւստրալիա:

Վերոյիշեալ բոլոր երկիրներն ալ՝ առաւել կամ նուազ չափով ունէին իրենց կազմակերպուած հայ գաղութները: Սակայն, Միջին Արեւելքէն, եւ կարեւոր թիւով Հայաստանէն դուրս եկած հայու-

թիւնը նոր աւիւն եւ կենսունակութիւն սրսկեց այն դադութներուն, սրոնց վրայ կ'երթար պատուաստուելու յիշեալ տասնամեակներուն: Նորեկները իրենց հետ կը բերէին շեշտուած ազգային ջիղ ու հայկականութիւն, հայ մշակոյթի հանդէպ նոր խանդավառութիւն, ինչպէս նաեւ կենցաղային այլազան սովորութիւններ:

Թափ առաւ հայկական դպրոցաշինութիւնը: Ծնունդ առին մշակութային նոր միութիւններ, ու վերակազմուեցան հիւնքեր: Հիմնուեցան նոր թերթեր ու պարբերաթերթեր: Մինչեւ անգամ քաղաքական կազմակերպութիւնները, սրոնք իրենց կեդրոնական օրկաններով խորազանեցին հայրենիքէն ու Միջին Արեւելքէն դէպի հեռաւոր երկիրներ կատարուած արտապաղթը՝ զայն որակելով «ազգադաւութիւն», «ղաւազանութիւն» եւ «դասալքութիւն», նոր իրազարժութեանց եւ իրողութիւններու հարկադրանքին տակ, պարտադրուեցան կազմակերպելու բազմացող նոր դադութները, հրատարակելու քաղաքական ու մշակութային նոր պարբերաթերթեր, եւ մինչեւ իսկ քաղաքական ու կուսակցական օրկաններ:

Երկրորդ հիմնական պատճառը կարելի է նկատել «յեզափոխականացած» նոր երիտասարդութեան հրապարակ իջնելը:

1965 թուականին, Ապրիլեան Եղեռնի յիսնամեակին նուիրուած սղեկոչումներէն սկսած, հայ երիտասարդութիւնը նոր թափ ստացաւ: Անոնք անդհացուցիչ յայտարարեցին մինչ այդ դործող կազմակերպութիւններն ու անոնց կողմէ հրատարակուած օրկանները: Անոնց համար անհրաժեշտ էր փոփոխութիւնը: Սեփական խօսք ունէին անոնք՝ յատկապէս հայ ազգային ու հասարակական կեանքի մասին, զորս չէին կրնար արտայայտել դասական ու կուսակցական հրատարակութիւններու միջոցով: Ու յանկարծ հրապարակը ողողուեցաւ նոր պարբերաթերթերով: Անոնցմէ ոմանք հազիւ լոյս տեսած՝ զանազան դժուարութիւններու պատճառով դադրեցան: Ուրիշներ՝ յարատեւեցին<sup>1</sup>:

Յիշենք երրորդ պատճառ մը եւս, որ թէեւ տեղական ու սահմանափակ ընդթ ունի, սակայն եւ այնպէս արժանի է նկատառու-

1. Հակառակ ներկայ յօդուածին անմիջական հետաքրքրութեան սահմաններէն դուրս իյնալուն, հարկ կ'ըլլայ նշել այստեղ, որ յիշեալ պարբերաթերթերու լեզու, դժբախտաբար, յաճախ կը մեղանչէ հայերէնի փերականութեան եւ ուղղագրութեան կանոններու դէմ: Արձանագրուած քերականութիւնն աւելի այսպանելի կը մնայ այն իրողութիւնը, որ խնդրոյ առարկայ քերթերու խմբագրներէն մտնէ, իրենց «յեզափոխական» տրամադրութիւններէն քեղադրուած, կը փորձեն համոզել ընթերցողը քէ կարելու չէ լեզուին փերականակն եւ ուղղագրական նշգրտութիւնը, անհրաժեշտը՝ հասկնալի ըլլալն է միայն:

թեան: Եթէ վերջին վեց տարիներուն վրայ երկարող Լիբանանի ցաւալի դէպքերը պատճառ հանդիսացան որ այս զաղութին կենսունակութեան փաստերէն մէկը եղող հայ պարբերաթերթերու հրատարակութեան աճը ոչ միայն կասի, այլև անոնց թիւը անկում արձանագրէ, միւս կողմէ՝ Իրանի մէջ կատարուած յեղաշրջումով, հայկական բազմաթիւ կազմակերպութիւններ, շրջանակներ, ուսանողական եւ աշակերտական խմբակներ ունեցան իրենց թերթերը, բան մը՝ որ խտուրտ արդիւնուած էր Շահի իշխանութեան օրերուն: Եւ այսպէս, մէկ-երկու տարուան ընթացքին, տասէ աւելի նոր անուններ եկան աւելնալու հայ պարբերական մամուլի մատենադիտութեան ցանկերուն վրայ:

Հայ պարբերական մամուլի թուական աճին նպաստող ազդակներէն մէկը կը հանդիսանայ նաեւ վերջին տարիներու այն ձգտումը, որ կը յայտնարերուի մեծ ու փոքր զաղութներու մօտ, դէպի ազգային արժատները վերադառնալու: Ձգտում մը, որուն որպէս հետեւանք՝ հեռուոր Ալիբրիկէի, Հարաւային Ամերիկայի ու Եւրոպայի զանազան երկիրներու յաճախ փոքրաթիւ հայ զաղութներու մէջ ծնան նոր պարբերաթերթեր, ազգային ու հայրենասիրական թեւազրութենէն անկախ՝ զանազան զաղութներու եւ հայրենիքի հետ չփում հաստատելու, ինչպէս նաեւ՝ զաղութը բաղկացնող հայերուն միջեւ կապ հանդիսանալու մտադրութիւններով:

Վերոյիշեալ պատճառներով, վերջին տասնամեակին, աւելի քան երկու հարիւր նոր անուններ եկան հարստացնելու հայ պարբերական մամուլի արդէն իսկ պատկառելի մատենադիտական ցանկը: Նման աճ մը հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ, միայն մէկ անգամ արձանագրուած է ցարդ, այն ալ՝ 1908 թուականի Օսմանեան խարուսիկ Սահմանադրութեամբ ստեղծուած խանդավառութեան օրերուն, երբ Կ. Պոլսոյ, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի գաւառներուն մէջ, բազմաթիւ նոր թերթեր ողողեցին հրապարակը:

Այստեղ հարկ է նշել, թէ սփիւռքահայ մամուլի մատենադիտական մեր այս ցանկը կը պարփակէ միայն այն պարբերական հրատարակութիւնները, որոնք սկսան լոյս տեսնել 1967-1980 թթ. երկարող ժամանակամիջոցին մէջ: Եւ այս սահմանափակումը անոր համար, որ հայ պարբերական մամուլի վերջին համահաւաք մատենադիտութիւնը՝ Հայ Պարբերական Մամուլի Մտեմնագիտութիւն (1970 թ.)<sup>2</sup>, արդէն իսկ յիշատակած է մինչեւ 1967 թուականը լոյս

2. Ամալիա Կիրակոսեան (Խմբ.), Հայ Պարբերական Մամուլի Մատենագիտութիւն, Երեւան, 1970:

տեսած հայերէն բոլոր պարբերաթերթերը: Այդ թուականէն ետք լոյս տեսած են մասնակի ցանկեր, ուսումնասիրութիւններ, մատենագիտութիւններ: Իսկ 1971 թ.ին հրատարակուած Ուղղացոյց Հայ Մամուլի<sup>3</sup> մատենագիտական աշխատանքը կը բովանդակէ 1970 թ.ին մէջ հրատարակուող հայերէն բոլոր պարբերաթերթերու ցանկը:

Այստեղ անհրաժեշտ է յիշատակել նաեւ որ մեր կողմէ պատրաստուած այս ցանկին մէջ չեն մտնել Սփիւռքի տարածքին օտար լեզուներով լոյս տեսնող հայկական պարբերաթերթերը, որոնց թիւը տասնեակներու կը հասնի:

### ՅԱՆԿ ՍՓԻՒՌԻՒՄԱՅ ՀԱՅ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ 1967-1980 ԹԹ.<sup>4</sup>

ԱԲԵՆԵԶԵՐ (Պէյրութ, Լիբանան, 1973 թ.) – Տարեգիրք Լոյսի եւ Կենաց Բարձրագոյն Վարժարանի: Առաջին երկու տարիներուն (1973-1974 թթ.) լոյս տեսած՝ «Տարեգիրք Լոյսի Վարժարանի» անունով: Գ. եւ Դ. հատորները՝ «Արեւեգեր» անունով: 62-142 էջ (21.5 × 29 սմ.):

ԱԶԱՏ ՀԱՅ (Թորոնթոյ, Գանատա, 1975 թ.) – Պարբերաթերթ (մեքենագիր-բազմազրուած): Լոյս կը տեսնէ անկանոն հերթակալութեամբ: Առաջին տարուան Ա. թիւը լոյս տեսած է 1975 թ.ի Հոկտեմբերի 1-ին: Մինչեւ 1977 թ.ի Փետրուար ամիսը լոյս տեսած է 10 թիւ: Նոյն տարուան 24 Ապրիլի թուակիրով կը սկսի Բ. տարին՝ թիւ 1-ով (11): Սկիզբը լոյս տեսած է փոքր ծաւալով, 16-32 էջ (14 × 21.5 սմ.): 1979 թ.ի Սեպտեմբերին կը սկսի նոր շրջան մը, հատոր 2, թիւ 1-ով, չափի եւ ծաւալի փոփոխութիւններով՝ 20-24 էջ, (21.5 × 28 սմ.): Խմբագրի անուն չէ յիշատակուած: Բ. տարին կը շարունակուի մինչեւ 1980 թ.ի Նոյեմբեր: 1979 թ.ի Սեպտեմբերէն 1980 թ.ի Նոյեմբեր լոյս տեսած է վեց թիւ:

ԱԶԱՏԱՄԱՐՏ (Բարիզ, Ֆրանսա, 1978 թ.) – Շաբաթաթերթ: Հրատարակութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ֆրանսայի

3. Edward Gulbekian (ed.), **Armenian Press Directory** London, 1971.

4. «Հանդէս»ի ներկայ հատորին մէջ հրատարակուած ցանկը առաջին մասն է 1967-1980 թթ.ու միջեւ հրատարակուած հայ պարբերական մամուլի նոր անուններուն: Երկրորդ մասը պիտի հրատարակուի «Հանդէս»ի յաջորդ հատորին մէջ: Ցանկը պատրաստուած է այբբենական կարգով:

Կեդրոնական Կոմիտէի: Խմբագիր՝ Տիգրան Ճինպաչեան: Հրատարակութեան տնօրէն՝ Ժ. Ալթունեան: Հայերէն եւ Ֆրանսերէն: 8 էջ (30×42 սմ.): Առաջին փորձ համարը, թիւ 0, լոյս տեսած է 1978 թ.-ի Մայիսի 13-ին: Այլ թիւին «Մեր Խօսքը» խմբագրականով կը արուի «Ազատամարտ»ի հիմնական ուղղութիւնը:

«Անհատական հաստատութիւն չէ այս:

«Հաւաքական կամք եւ մտածողութիւն, հայ ժողովուրդի քաղաքական դատին թափ տալու ձգտումով, Հ. Յ. Դաշնակցութիւնը վերստին հրապարակ կու գայ՝ իր նոր պաշտօնաթերթով:

«Անյետաձգելի պահանջ էր եւրոպական ափերու հայ սերունդին տրամադրել արտայայտութեան եւ յարաբերութեան գործնական միջոց»:

**ԱԶԴԱԿ ՇԱՔԱԹՕՐԵԱԿ-ԴՐՕՇԱԿ** (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) – Ազգային, քաղաքական, հասարակագիտական շարաթաթերթ: Հրատարակութեան սկիզբ՝ 23 Նոյեմբերի, 1969 թ.: Ծաւալ՝ 16 էջ (22×29 սմ.): Երբեմն՝ յատուկ առիթներով՝ աւելի ծաւալուն: Վարել է խմբագիր՝ Բարգէն Փափաղեան, խմբագիր՝ Սարգիս Զէյթլեան: Թ. տարիէն (1978 թ.-ի Յունուար) սկսեալ, միակ խմբագիր՝ Սարգիս Զէյթլեան: Աշխատակիցներու շարքին՝ Բ. Փափաղեան, Ս. Կալեան (Զէյթլեան), Է. Յովհաննիսեան, Լեւոն Մկրտչեան, Ա. Ամուրեան, Հրաչ Տասնապետեան, Պօղոս Մնայեան, Հ. Մարուխեան, Մուշեղ Իշխան, Վ. Տարեան (Վաչէ Տարազեան), Յարութիւն Գլուրճեան, Վահէ Օշական, եւ ուրիշներ:

«Ազգակ Շարաթօրեակ-Դրօշակ»ը կը հանդիսանայ Հ. Յ. Դաշնակցութեան տեսական-գաղափարախօսական օրկանը, ինչպէս նաեւ նոյն կազմակերպութեան առաջին օրկանին՝ «Դրօշակ»ին (1891 թ.) ուղղութեան ու բովանդակութեան աւանդակիրը: «Նպատակը» խորագրուած իր առաջին խմբագրականով, «Ազգակ Շարաթօրեակ-Դրօշակ» կը յայտնէ:

«Լոյս կը տեսնենք Սփիւռքահայութեան մէջ. սակայն՝ համա՛յն հայութեան համար:

«Մեզի համար մէկ ամբողջութիւն է հայութիւնը: Կուսակցական հակադիր մտածողութիւններն ու ճամբաները չեն կրնար ամբողջական հայութեան գաղափարը արմատախիլ ընել մեր հոգիներէն:

«Հայ ժողովուրդին համար այսօր հիմնական է իր ամբողջականութեան զիտակցութիւնը եւ այդ զիտակցութեան անաղարտ պահպանումը:

«Օրաթերթերը հարկադրաբար կը խմբադրուին օրը օրին եւ կը ստանան առօրեայ կեանքին հեւքն ու կշռոյթը: ... Այս շարաթաթերթ

օրդանը լոյս կը տեսնէ՝ դուրս դալու համար առօրեայ հեւքոտ կեանքի ճնշումներէն, փնտռելու համար աշխարհը ցնցող դէպքերուն եւ իրադարձութեանց մէջ հեռքերը մնայուն եւ տեւական արժէքներուն, որոնք ընդհանրական են, համայն մարդկութիւնը կրնան հետաքրքրել...» :

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ (Սիտնի, Աւստրալիա, 1968 թ.) – Հոդեւոր թերթիկ, կը հրատարակուի Արթոյ եւ Յակոբ Գոյուճեաններու կողմէ, անդամ՝ Հայ Հոդեւոր Եղբայրութեան :

ԱԼԻԲ ՊԱՏԱՆԵԿԱՆ (Թեհրան, Պարսկաստան, 1969 թ.) – Երկշաբաթաթերթ : Հրատարակութիւն Թեհրանի Հայ Պատանեկան Միութեան : Արտօնատէր՝ Ռոստոմ Ստեփանեան : Հ.Յ.Դ.ի պաշտօնական օրկան «Ալիք»ի «Պատանեկան էջ»ը, 1969 թ.ի Նոյեմբերի 26-ին կը վերածուի ինքնուրոյն պարբերաթերթի, դունաւոր եւ պատկերազարդ : Ընդհանրապէս բաղկացած 16 էջէ (25×35 սմ.) :

Առաջին համարի «Մեր Խօսքը» առաջնորդող յօդուածին մէջ կարելի է գտնել «Ալիք Պատանեկան»ի ուղղութեան հիմնական միտք բանին :

«Մեր նպատակը պիտի լինի՝ հայ նոր սերնդին, երիտասարդութեան ամէն ձևով կապել հայերէն թերթի, սիրցնել հայերէն լեզուով ընթերցանութիւնը, սերմանել նրանց մտաղաչ հողիներում՝ հայրենիքի ու հայութեան սէրը...» :

Թէեւ «Ալիք Պատանեկան»՝ սակայն բովանդակութիւնը յաճախ պատանեկան բարձր տարիքի տղոց եւ մինչեւ անդամ երիտասարդութեան հասցեագրուած է : Թերեւս ասկէ՝ մտահոգութիւնը ունենալու «Ալիք Մանկական» անունով յաւելուած մը, որ երբեմն ընկերակցած է «Ալիք Պատանեկան»ի կարգ մը համարներուն, որպէս առանձին հրատարակութիւն : Օրինակ՝ «Ալիք Պատանեկան»ի Ա. տարուան 9-րդ համարին հետ լոյս ընծայուած «Ալիք Մանկական»ը, 8 էջ (17.5×24.3 սմ.) :

ԱԿՆՈՅ (ՄԵԼՅՈՒՆ, Աւստրալիա, 1971 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն ՄԵԼՅՈՒՆԻ Հայ Եկեղեցւոյ Երիտասարդական Կազմակերպութեան (Հ.Ե.Ե.Կ.) : Մեքենագիր-բազմագրուած, հայերէն-անգլերէն բովանդակութեամբ, «Ակնոց»ը ունեցած է տարուերեւոյց էջաթիւեր, 20-30 (21×29.5 սմ.) : Պատասխանատու-Հրատարակիչ՝ Նուպար Ալիաքեան :

ԱԿՕՍ-ԼՐԱՏՏՈՒ (Պէյրութ, Լիբանան, 1974 թ.) – Համազգայինի լրատու : Ա. թիւին մէջ (1974, թիւ 1) կը կարդանք. «Առ այժմ ԱԿՕՍ-ԼՐԱՏՏՈՒՆ լոյս պիտի ընծայէ տարին չորս թիւ ...բազմահազար տպաքանակով, նուազագոյնը 16 էջերով...» (17×24 սմ.) : Սա-

կայն, 1975 թուականին սկսած Լիրանանի դէպքերը վերոյիշեալ խոստումին իրագործումին արդելք կը հանդիսանան :

Նոյն ձեւով, նախապէս, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը պարբերաբար լոյս ընծայած է «Լրատու» կամ «Տեղեկատու» անունով գրքոյկներ :

ԱՅՆՃԱՐ (Այնճար, Լիրանան, 1969 թ.) – Կրօնական, մանկավարժական, գիւղատնտեսական, հասարակագիտական պարբերաթերթ : Լոյս ընծայուած է 1969 թ.ի Մարտ–Յունիս ամիսներուն միջեւ, ընդամէնը՝ 4 թիւ, մեքէնագիր բազմազրուած, 28–35 էջ (19×27 սմ.) : Սմբազիրներ՝ Վարուժան Արեղայ Հերկելեան, Հայկ Թիւլպեան, Ներսէս Ներսոյեան եւ ուրիշներ :

Լոյս ընծայուելով լիրանանահայ գաղութի զուտ հայաբնակ գիւղական միջավայրին մէջ, «Այնճար»ի խմբագիրները, այլ նպատակներու կողքին, կ'առաջադրեն «Գիւղատնտեսական կենսական հարցերու շուրջ հրաւիրել ուշադրութիւնը մեր գիւղացի եւ աշխատասէր ժողովուրդին : Այսպէս՝ երկրագործական, կովարուծական, կախնագիտական, ատոնին տնտեսագիտական, ձեւագիտական եւ նման այլ տնայէն հարցեր» :

Իր տեսակին մէջ, Սփիւռքահայ պարբերական հրատարակութեանց գծով, «Այնճար» կը հանդիսանայ եզակի թերթ մը :

ԱՇԱԿԵՐՏ (Թեհրան, Պարսկաստան, 1979 թ.) – Աշակերտական պարբերաթերթ : Ձեռնարկ՝ Պատանեկան Կազմակերպութեան : Առաջին թիւը լոյս տեսած է 1979 թ.ի Սեպտեմբերին, բաղկացած՝ 14 էջէ (20.5×25 սմ.) : Հետագային էջերը տարուբերած են 14–24-ի միջեւ, եւ չափը փոփոխութիւն կրած է (24×30 սմ.) :

«Աշակերտ»ի երիտասարդ խմբագիրները կը յայտնեն. «Մենք այս թերթով նպատակ ունենք անդրադառնալ այն խնդիրներին, որ արծարծուած են հայ աշակերտների եւ պատանիների համար : Մենք փորձելու ենք վերլուծել եւ քննարկել, ինչու չէ նաեւ գործնական առաջարկներ կատարել նման խնդիրները լուծելու համար» :

ԱՊԱԳԱՅ (Մոնթրէալ, Գանատա, 1975 թ.) – Ազգային մշակութային, հասարակական շաբաթաթերթ : Հրատարակութիւն Գանատայի Թէքէեան Մշակութային Միութեան : Լոյս կը տեսնէ 1975 թ.ի Սեպտեմբերի 13-էն ի վեր : 8–12 էջ (29×35.5 սմ.) :

Առաջին թիւի խմբագրականը, որ կը կրէ «Ապագային նախելով» խորհրդանշական խորագիրը, ի մէջ այլոց կ'ըսէ .

«Այսօր, երբ լոյս կ'ընծայենք դանատահայ առաջին շաբաթաթերթը, մեծ յաւակնութիւններէ աւելի հայ մամուլի նախահօր մտահոգութիւններն են որ կ'առաջնորդեն մեզ ու մեր հայեացքը կը սե-

ւեռեն ասպարազին, Ըլլայ մեր անհատական թէ միութենական ու շեշտակի կերպով՝ դանատահայ ասպարազին ևւ ընդհանուր ամամամբ ամբողջ հայոց ասպարազին: Ահա թէ ինչպէս ծնունդ կ'առնէ «Ասպարազ» անունը այս թերթին ճակատին:

ԱՊՐԻԼ (Լոս Անճելըս, Ա.Մ.Ն., 1977 թ.) - Մշակութային և կենցաղային ամսաթերթ: Խմբագիրը՝ Յարութիւն Երէցեան: 1977 թ.ի Ապրիլին լոյս կը տեսնէ «Ապրիլ»ի փորձառական 0 թիւը՝ որպէս «ծանօթացման» թիւ, իսկ Մայիսին՝ առաջին համարը: 28-72 էջ (20·5×26 սմ.):

«Ապրիլ»ի առաքելութիւնը բանաձեւուած կը գտնենք հետագայ թիւերէն մէկուն մէջ.

«...ի շահ հայ անհատին՝ հետեւարար ի շահ հայ ազգին է, որ պէտք է դարկ տրուի հայերէն լեզուի տարածման ևւ զործածութեան: Այս օրտաշատ գործը իր ուսերուն բարձած է հայ մամուլը ևւ այդ կարելի է նկատել զլիսաւոր առաքելութիւնը հայերէն թերթերուն, որոնք մեզ մնայուն շփման մէջ կը դնեն թէ մեր մայրենի լեզուն ևւ թէ մեր մշակոյթին հետ» (Հոկտեմբեր 1977, թիւ 6, էջ 3):

ԱՌԱՋՆՈՐԴ (Պէյրութ, Լիբանան, 1973 թ.) - Պարբերաթերթ Հայ երիտասարդաց Ընկերակցութեան Չարեհ-Նուար Սկաուտական Խումբի: Ա. թիւը լոյս տեսած է 1973 թ.ի Մարտին, մեքենագիր-բաղմադրուած (22×25 սմ.): 1973 թ.ի Յունիսին ևւ Սեպտեմբերին՝ Բ. ևւ Գ. թիւերը լոյս տեսած են տպագիր, 20 էջ (22×28 սմ.): Ապա՝ դադրած: Խմբագիրը՝ Պերճ Արապեան: Ընդհանուր պատասխանատու՝ Տիրան Շաբլեան:

ԱՐԱԳԱՅ (Մոնթէվիտէօ, Ուրուկուէյ, 1974 թ.) - Լրատու Ուրուկուէյի Հ.Բ.Բ. Միութեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1974 թ.ի Մայիս: Հայերէն ևւ սպաներէն, 16 էջ (17×22·5 սմ.):

ԱՐԱՀԵՏ (Բարիդ, Ճրանսա, 1976 թ.) - Պարբերական հրատարակութիւն Ճրանսահայ Գրողներու Ընկերակցութեան: Առաջին համարը լոյս տեսած է 1976 թ.ին, իսկ երկրորդը՝ 1977 թ.ի աշնան: 32 էջ (18×27 սմ.):

Առաջին թիւին մէջ կայ խմբագրական կազմի լրիւ ցանկը. Աւետիս Ալեքսանեան, Եղիշէ Այվազեան, Հրանդ Գուլումճեան, Վարդան Եղիշէեան, Ս. Ք. Զանգու (պատասխանատու խմբագիր), Նազարէթ Թօփալեան, Զարեհ Որբունի, Սիմոն Պապիկեան, Կարիկ Պասմաճեան, Յակոբ Վէլիբեան, Գեղամ Քէրէսթէճեան:

Առաջին համարին մէջ կայ հետեւեալ տեղեկութիւնը. «Յետ այսու, «Տեղեկատու»ն լոյս կը տեսնէ «Արահետ» անունան տակ»: (Խնդրոյ առարկայ «Տեղեկատուն» լոյս տեսած է 1975 թուականի աշ-

նան, միակ մէկ թիւ, 32 էջ (19×28 սմ.) :

«Արահետ»ի ուղղութեան եւ նպատակներուն ծանօթանալու համար, հարկ է զիմեւ «Տեղեկատու»ին մէջ լոյս տեսած «Երազ եւ իրականութիւն» խորագրուած խմբագրականին, ուր, ի մէջ այլոց կը կարդանք :

«Յրանսահայ Գրողներու Ընկերակցութիւնը, առջին անգամ է որ գրական-գեղարուեստական սրբերեականով մը հրատարակ կ'իջնէ այսօր :

«Այսօր, այս վեցամսեայ պարբերականով, Հայ Գրողներու Ընկերակցութիւնը սլոտի փորձէ աւելի մօտենալ ժողովուրդին եւ տեւական կապ պահել անոր հետ : . . .

«Իր նպատակը պարզ է : Հետեւիլ Հայրենիքի եւ Սփիւռքի գրական կեանքին եւ մէկ յայտարարի բերել մեր գրողները :

« . . . «Տեղեկատու»ի էջերը բաց են սփիւռքի հայ գրողներուն առջեւ. գրողներ՝ որոնք դեռ կը հաւատան զիր ու գրականութեան հրաշքին : Հայրենի գրողներէն եւս կը սպասենք որ բերեն իրենց մասնակցութիւնը :

«Պէտք է մոտացումէ փրկել ու իր արժանի բարձրութեան վրայ պահել մեր մեծաւազնը, որ մեր լինելութեան ամենամեծ գրաւականն է :

«Հայ Գրողներու Ընկերակցութիւնը այդ հաւատքով եւ յոյսով է որ ճամբայ կ'ելլէ այսօր» :

ԱՐԱՐԱՏ (Վրեննա, Աւստրիա, 1971 թ.) – Ուսանողական հանդէս : Հրատարակութեան սկիզբ՝ 1971 թ.ի Ապրիլ : Հրատարակիչ խմբագիր՝ Սիմոն Պապիկեան : Մեքենագիր-բաղմագրուած, 19-42 էջ (21×29.5 սմ.) : Դաղրած է հրատարակութեան երկրորդ տարին : Բովանդակութիւնը՝ հայերէն եւ գերմաներէն :

ԱՐԱՐԱՏ (Թեհրան, Պարսկաստան, 1979 թ.) – Տեղեկատու ամսագիր : Հրատարակութիւն Թեհրանի Հայ Մարզական Արարատ Կադմակերպութեան (ՀՄԱԿ) : Նախապէս լոյս տեսած՝ Հ.Մ.Ա.Կ.ի Տեղեկատու անունով : Առաջին թիւը՝ 1979 թ.ի Սեպտեմբերին : Ընդհանրապէս՝ 16 էջ (22×33 սմ., ապա՝ 21.5×29 սմ.) :

Դիւսաւորարար կը բովանդակէ մարզական տեղեկութիւններ, ունի նաեւ գրական բաժին մը :

ԱՐԱՐԱՏԻ ՉԱՅՆ (Գարադաս, Վենեզուելա, 1974 թ.) – Պաշտօնաթերթ վենեզուելահայ դաղուրթի : Առաջին թիւը լոյս տեսած է 1974 թ.ի Յունուարին : Վարիչ-տնօրէն՝ Վահան Վրդ. Պէրպէրեան : Հետագայ թիւերը՝ երկու լեզուով, հայերէն եւ սպաներէն : Մեքենագիր-բաղմագրուած, 16-60 էջ (21.5×32 սմ.) :

**ԱՐԱՔՍ** (Սիտնի, Աւստրալիա, 1976 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակուեթիւն Աւստրալիոյ Հայ Ուսանողական Ընկերակցութեան : Խմբագիր՝ Ս. Գրդեաշարեան : Օգնականներ՝ օրերորդ Ս. Աւագեան (հարեւելեան բաժինի խմբագիր) եւ օր. Ս. Պանեան (անդլեւելեան բաժինի խմբագիր) : Այժմ՝ դադրած : Նոյն կազմակերպութիւնը ապա լոյս կ'ընծայէ «Շիրազ»ը :

**ԱՐԻԱՐ** (Կ. Պոլիս, Թուրքիա, 1968 թ.) – Քաղաքական-ժողովրդական շարաթաթերթ : Հակառակ անունին, թերթը կը դրաղը ոչ միջազգային եւ ոչ ալ ներքին քաղաքական լուրերով եւ հարցերով, այլ՝ նեղ, սահմանափակ, եկեղեցական եւ ազգային հարցերով : Թերթին արտօնատէրն է Լեւոն Տէօքմէճեան : Հրատարակութեան տնօրէն՝ Պոստով Էմիրդէան : Առաջին համարը լոյս տեսած է 1968 թ.ի Դեկտեմբերի 18-ին : 4 էջ (29×41 սմ.) : Իր առաքելութեան մասին թերթը կը գրէ. «Ծառայել մեր պատկանած համայնքին, միշտ բարձր բռնելով անոր շահերը անձնական հաշիւներէ եւ նկատումներէ» :

**ԱՐԵԳ** (Գահիրէ, Եգիպտոս, 1979 թ.) – Պարբերական տեղեկատու Նուպարեան Ազգային Վարժարանի աշակերտութեան : Առաջին համարը լոյս տեսած է 1978-79 տարեշրջանին՝ 1979 թուականով : Աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմ : 40 էջ (16×23.2 սմ.) :

**ԱՐԵՆՈՅՇ** (Պէյրութ, Լիբանան, 1967 թ.) – Պարբերաթերթ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան (Հ.Ե.Ը.) Արեւուշներու : Լոյս ընծայուած՝ մէկ թիւ, 1967 թ.ին, 36 էջ (17×24 սմ.) :

**ԱՐԵՒԱԳԱԼ** (Գորտոպա, Արժանթին, 1970 թ.) – Տեղեկատու Հայ Առաքելական Ս. Գէորգ Եկեղեցւոյ, Գորտոպա : Խմբագիր-հրատարակիչ՝ Տաթև Վրդ. Ղարիպեան : Սկսած է լոյս տեսնել 1970 թ.ի Յունուարէն : Հայերէն եւ սպաներէն : Մեքենագիր-բազմազրուած 18-24 էջ (22×28.5 սմ.) :

**ԱՐԵՒԱՇՈՂ** (Մայամի, Ֆլորիտա, Ա.Մ.Ն., 1979 թ.) – Թերթիկ Մայամիի Հայոց Ս. Մեսրոպ Կազմակերպութեան, որուն ատենապետն է՝ Օհան Ապաղեան : Հրատարակութեան սկիզբ՝ 1979 թ.ի Սեպտեմբեր : Առանց էջաթիւի (18×21.5 սմ.) :

**ԱՐԵՒԵԼԻՔ** (Թեհրան, Պարսկաստան, 1980 թ.) – Ամսաթերթ : Սկսած է հրատարակուել 1980 թ.ի Ապրիլին : «Արեւելք» իր առաջին թիւով կը գրէ .

«Մենք հաւատացած ենք, որ հայ ժողովրդի եւ Միջին Արեւելքի ժողովուրդներին շահերը խորապէս կապուած են իրար հետ... : Հենց այդ նկատառումով էլ մենք ընտրել ենք «Արեւելք» անունը թերթը համար» :

**ԱՐՁԱԳԱՆԳ** (Թորոնթոյ, Գանատա, 1972 թ.) – Ամսագիր :

Հրատարակութիւն Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Թորոնթոյի Սիմոն Չաւարեան Ուխտին: Հայերէն եւ անգլերէն: Հրատարակութեան սկիզբ՝ 1972 թ. փետրուար: 42-60 էջ (21.5 × 28 սմ.):

ԱՐՁԱԳԱՆԳ (Մոնրոյիւ, Լիպերիա, 1977 թ.) – Պարբերաթերթ Լիպերիոյ Հայոց Միութեան: Խմբադրական Մարմին՝ Ռիթա Դաւիթաղայեան, Վարուժան Հեքիմեան, Վահէ Հեքիմեան: Առաջին թիւը՝ 1978 թ. Ենոյեմբերի 1-ին: Մինչեւ 1978 թ. Յունիսը լոյս տեսած է չորս թիւ: Մեքենագիր-բաղմագրուած, 8-26 էջ (21.5 × 28 սմ.):

ԱՐՁԱԳԱՆԳ (Կլենտէյլ, Ա.Մ.Ն., 1978 թ.) – Մշակութային, դրական-գեղարուեստական, եռամսեայ լրատու պարբերաթերթ: Կը հրատարակուի Կլենտէյլի Համալոյսային Հայ Մշակութային Ընկերակցութեան գրական-գեղարուեստական Յանձնախումբին կողմէ: Խմբադրական կազմ՝ Նահապետ Մելքոնեան, Տրդատ Քէչիչեան, Եփրեմ Չաւարեան: Գ. տարիէն սկսեալ՝ Տրդատ Քէչիչեան կը փոխարինուի Գրիգոր Շէնեանով: Ա. եւ Բ. տարին լոյս կը տեսնէ երկուական թիւ, Գ. տարին՝ միացեալ թիւ մը (Յունուար-Յունիս): 8-16 էջ (21.5 × 28 սմ.):

ԱՐՁԱԳԱՆԳ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՅԵՐՈՒ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆՅ (Պէյրութ, Լիբանան, 1968 թ.) – Հրատարակութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան Ընկերային Ծառայութեանց Յանձնախումբին: Լոյս կը տեսնէ 1968 թ. Ի տարեակիզբէն: Մեքենագիր-բաղմագրուած: (22 × 28 սմ.): Գլխաւորութեամբ Ծ. Տայնզի:

ԱԻՏԱԲԵՐ (Պոլէնոս Այրէս, Արժանթին, 1967 թ.) – Ամսաթերթ Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցիի: Հայերէն եւ սպաներէն: Խմբադրական կազմ: 4 էջ (29 × 41 սմ.):

ԲԱՆԲԵՐ (Պէյրութ, Լիբանան, 1972 թ.) – Հրատարակութիւն Լիբանանի Հայ Համալսարանաւարտներու Միութեան: Լոյս տեսած է երկու թիւ, առաջինը՝ 1972 թ. Ին, երկրորդը՝ 1973 թ. Ին: 64 եւ 56 էջ (20 × 27.5 սմ.): Միութեան գործունէութեան եւ տեղեկագիրներուն հայելին կը հանդիսանայ «Բանբեր»ը:

ԲՈՒՐՎԱՌ (Նիւ Եորք, Ա.Մ.Ն., 1970 թ.) – Լրատու ամսագիր: Հրատարակութիւն Նիւ Եորքի Ս. Սարգիս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիներու: Խմբատիւղ, հայերէն եւ անգլերէն լեզուներով: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.: Խմբագիր Ներսէս Քահանայ Բարուեան(?):

ԳԱՂՈՒՍՏ (Գահիրէ, Եգիպտոս, 1975 թ.) – Հրատարակութիւն Գալուստեան Հայոց Երկրորդական Վարժարանի Ծնողաց Խոր-

Հուլիտի Տեղեկատու Մարմինն: Լոյս ընծայուած՝ միայն երեք թիւ, 1975 թ.ի Սիպտեմբերի 26-ին, Հոկտեմբերի 4-ին եւ 16-ին: Մեքենագիր-բաղմադրուած, 4 էջ (17×25 սմ.):

ԳԱՐՈՒՆ (Կ. Պոլիս, Թուրքիա, 1970 թ.) – Մանկապատանեկան ամսաթերթ: Հրատարակութեան վերջին տարիներուն՝ տարին 6 թիւ: Հրատարակութիւն Թրքահայ Ուսուցչաց Միութեան: Վարիչ-խմբագիր՝ Շողեր Չափարեան: Թեքնիք-խմբագիր՝ Երուանդ Կոսէլեան (մինչեւ 1973 թ.ի Մարտը՝ թիւ 35): Արտօնատէր՝ Տոքթ. Վահրամ Գունտաղճեան: Հրատարակութեան սկիզբ՝ Մարտ, 1970 թ.: 16 էջ (23×16 սմ.):

«Գարուն» հետեւեալ նախագասութիւններով կը զիմէ իր ընթերցողներուն.

«Փոքրիկ ընթերցող, ժիւր ընթերցող, ուսումնատե՛նչ ընթերցող, քեզի՛ է մեր խօսքն այսօր, քեզի համար է որ լոյս կը տեսնէ այս թերթը այսօր:

«...Որակեալ մանկավարժ եւ զրչի վարպետներէ բաղկացած յատուկ յանձնախումբի մը կողմէ պատրաստուած այս մանկաթերթը կը հրատարակուի Ուսուցչաց Միութեան կողմէ իսկական զոհողութեամբ եւ աջակցութեամբ Ուսուցչաց Հիմնարկին»:

ԳԵՂԱՐԴ (Մարտէյլ, Ֆրանսա, 1967 թ.) – Տեղեկատու ամսագիր: Հրատարակութիւն Մարտէյլի Հայ Առաքելական Եկեղեցիի: Հայերէն-Ֆրանսերէն: Խմբագիր՝ Վազգէն Վրդ. Քէչիշեան:

ԳԵՂԱՐԴ (Մոնթրէալ, Գանատա, 1969 թ.) – Գրական, մշակութային եռամսեայ հանդէս: Հրատարակութիւն Մոնթրէալի Պոլսահայ Միութեան: Հիմնադրուած՝ 1969 թ.ի Յունիսին: Խմբագիր՝ Գ. Մ.:

ԳԵՂԱՐԴ, Սուրիահայ Տարեգիրք (Հալէպ, Սուրիա, 1975 թ.) – Հրատարակութիւն Հալէպի Հ.Բ.Ը. Միութեան Մատենադիտական Յանձնախումբի: Յարդ հրատարակուած են երկու հատորներ: Առաջինը՝ 1975 թ.ին, 548 էջ (17×24 սմ.), իսկ երկրորդը՝ միացեալ թիւ մը, 1976-1978 թթ., 500 էջ (17×24 սմ.): Խմբագիր՝ Հայկ Պարիկեան: Բովանդակութիւնը կը բաղկանայ զրական, ղեղարուեստական, բանասիրական ու պատմագրական բաժիններէ: Ունի նաեւ մահագրութիւններու բաժին մը: Աշխատակցութեամբ՝ գլխաւորաբար հալէպահայ, ինչպէս նաեւ հայրենի եւ սփիւռքահայ գրողներու եւ մտաւորականներու:

«Գեղարդ»ի առաջին հատորի «Երկու Խօսք»ին մէջ կը կարդանք.

«Գեղարդ կոչեցինք մեր Տարեգիրքը, որովհետեւ հաւատացած

ենք որ առհաւական մեր ճառագայթումներուն տեսիլքը պերճօրէն մարմնացած է ողեղէն այդ հնաւանդ կառոյցին արտաքին պարզութեան եւ ներքին զեղեցիկութեան մէջ: . . .

«Հալեպահայ գաղութը, որուն ճակատագրուեցաւ ըլլալ առջիննկ մայրը հետագային կեանքի կոչուող այլ գաղութներու մայրութիւններուն, անհրաժեշտ էր որ ունենար իր խօսնակը, եւ անով լսելի դարձնէր իր ձայնը՝ որպէս աւանդապահը շրջանի մը հարուստ պատմութեան. պատմութիւն՝ որ շաղապատուած է Հայու շինարար քրտինքով եւ Արար պղնիւ փողովուրդին եղբայրական օգնութեամբ:

«Այս զոյգ առաջագրութիւններով ուրեմն, Գեղարդ Տարեկիրքը, հոգեւոր ստեղծագործութիւններու եւ աւանդութիւններու նուիրուած սիրոյ եւ խանդաղատանքի գործ մըն է»:

ԳեղԱՐՈՒԵՍՏ (Պէյրութ, Լիբանան, 1975 թ.) – Պարբերաթերթ Հայ Աւետ. Գոլէճի Արուեստից Ակումբի: Առաջին թիւը՝ 1975 թ.-ին, երկրորդը՝ 1979 թ.-ի Յունիսին: Խորհրդատու ուսուցիչ՝ Վաղդէն Թիւթիւնճեան: Մեքենագիր-բաղմագրուած, 38-55 էջ (20×27 սմ.):

ԳԻՏՆԱՆՔ (Մոնթրէալ, Գանատա, 1979 թ.) – «Ապագայ» շաբաթաթերթի յաւելուած: Լոյս տեսած է միայն քանի մը թիւ: Առաջին թիւը 1979 թ.-ի Դեկտեմբերի 29-ին: Լոյս ընծայուած՝ գաղութը յուզող վէճերու առիթով, «Լուսաւորիչ» (Հ.Բ.Ը.Մ.ի հրատարակութիւն) պարբերաթերթին հակադրուելով: 8 էջ (28.5×38 սմ.):

ԳՐՈՂ (Գահիրէ, Եգիպտոս, 1978 թ.) – Մարդաթերթ: Հրատարակիչ եւ խմբագիր՝ Իվան Թորոսեան: Առաջին թիւը լոյս տեսած է 1978 թ.-ի Հոկտեմբերի 28-ին (այս թուականը կը ստուգուի երկրորդ թիւէն): Երկրորդ թիւը՝ նոյն տարուան Դեկտեմբերի 30-ին: 1979 թ.-ին երկու նոր թիւեր: Վերջինին (թիւ 4) թուականը՝ 14 Յուլիսի, 1970 թ.: Ապա՝ դադրած: 16 էջ (24×33 սմ.):

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ (Լոս Անճելլոս, Ա.Մ.Ն. 1978 թ.) – Հրատարակութիւն Ամերիկայի Արեւմտեան Նահանգներու Աղագային Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդին: Հայերէն եւ անգլերէն: 8-12 էջ (14×21.5 սմ.): Հատորն ու յաջորդական թիւերը յիշատակուած են, սակայն ոչ մէկ թուականի յիշատակում կայ: Կարգ մը թիւերու բովանդակութենէն դատելով՝ «Դաստիարակչական Ամսաթերթ»ը սկսած է հրատարակուիլ 1978 թ.-ի վերջերուն:

ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ (Հոլանտա, 1978 թ.) – Ամսագիր: Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1978 թ.-ի Մայիսին: Հայերէն եւ հոլանտերէն: Թերթի նպատակը եղած է Հոլանտայի հայ գաղութին եւ ընդհանրուն

ճանօթացնել Հայաստանի նուաճումները, սփյուռքահայութեան պատկերը, նաեւ՝ հայ ժողովուրդի անցեալն ու ներկան: Հրատարակութեան տարին, մինչեւ Դեկտեմբեր, լոյս տեսած է 9 թիւ: Այժմ՝ դադարած:

ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ՂՕՂԱՆՁ (ՊԵՓՓԱՅ, ԼԻՐԱՆԱՆ, 1978 թ.) – Պարբերաթերթ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեկանքի: Վարել խմբապետներ՝ Արարատ Արեղայ Թօսունեան եւ Արշաւիր Արեղայ Գաիուճեան: Մեքենագիր-բաղմադրուած, 23-34 էջ (22×28 սմ.): Առաջին թիւը լոյս տեսած է 1978 թ.ի Փետրուարի 2-ին:

ԴՊՐՈՅԱՍԻՐ (Բարիւզ, Ֆրանսա, 1975 թ.) – Աշակերտական պարբերաթերթ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի: 1975 թ.էն մինչեւ 1980 թ.ի սկիզբը լոյս տեսած է չորս թիւ, առաջին երեքը՝ տպագիր, չորրորդը՝ մեքենագիր-բաղմադրուած:

ԵԴԵՄ (Նիւ Եորք, Ա.Մ.Ն., 1967 թ.) – Լրատու ամսագիր: Հրատարակութիւն Հայ Առաքելական Սր. Աստուածածին Եկեղեցիի: Հրատարակիչ խմբապետ՝ Գուրգէն Գուտուլեան: Հայերէն եւ անգլերէն լեզուներով: (22×28 սմ.):

2001 (Պէյրութ, Լիբանան, 1970 թ.) – Պատանեկան պարբերաթերթ: Հրատարակութիւն Հ.Յ.Դ. Զաւարեան Ուսանողական Միութեան: Սկսած է հրատարակուիլ 1970 թ.ի Սպրիլէն: Լոյս տեսած է միայն 9 թիւ: Դադարած՝ 1971 թ.ի Մայիսին: Օրինականօրէն լոյս տեսած է որպէս «Ազդակ» օրաթերթի յաւելում: Խմբադրական կազմ՝ Նազարէթ Պէրպէրեան, Դերենիկ Թերճանեան, Հուրի Գարահեան, Սօսի Յակոբեան, Հուրի Չոլաքեան: Հինգերորդ թիւէն սկսեալ խմբադրական կազմին վրայ կ'աւելնան նոր անուններ: Թէեւ պարբերաթերթ՝ սակայն ամսագրի կանոնադրութեամբ լոյս տեսած է 2001-ը, փոքր ընդմիջումով մը՝ 1970 թ.ի Յուլիսէն Սեպտեմբեր: Ունեցած է քաղաքական, տնտեսական, դրական, գիտական, գեղարուեստական եւ մարզական բաժիններ:

2001-ը իր ուղղութիւնը կը բանաձեւէ հետեւեալ տողերով.

«Մերօրեայ հայ պատանին, դպրոցին մէջ թէ՛ դուրս, կ'լանուած է իր անմիջական միջավայրին ներկայով ու ապագայով: Հազուադէպ առիթներ միայն կ'ունենայ մտահոգուելու հայկական հարցերով: Ուստի, հայկական ընդհանուր միջնորդով մը մէջ, յիշեալ սերունդին այժմէակիան պահանջներուն ու տաղնապններուն անդրադարձող միայուն թերթ մը մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ»:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (Պէյրութ, Լիբանան, 1973 թ.) – Պարբերաթերթ Հայ Աւետ. Գուլէճի Երաժշտութեան Ակումբի: Մեքենագիր-բաղմադրուած, լոյս տեսած՝ երկու թիւ, 1973 եւ 1974 թթ. ու

Յունիսին, 30-34 էջ (20·5×27 սմ.) :

ԵՐԻՏԱՍԱՍՐԳ ԶԱՅ. (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) – Գրական, հասարակական երկչարթաթերթ: Առաջին համարը լոյս տեսած է 1969 թ.ի Դեկտեմբերի 27-ին: Վերջինը՝ թիւ 101, 1975 թ.ի Մարտի 25-ին: Ա. տարին՝ 26 թիւ, Բ. տարին (1971 թ.)՝ եւ Գ. տարին (1972 թ.)՝ 20-ական թիւ, Դ. տարին (1973 թ.)՝ 23 թիւ, Ե. տարին (1974 թ.)՝ 11 թիւ, իսկ վերջին տարին (1975 թ.)՝ միայն մէկ թիւ: Ապա՝ նիւթական դժուարութիւնները, թերթին շուրջ բոլորուած երիտասարդներուն հանդէպ ցուցաբերուած անհանդուրժողութիւնը, նաեւ՝ Լիբանանի տխուր դէպքերը, որոնք ծայր առին 1975 թ.ի Մարտ-Ապրիլ ամիսներուն, պատճառ հանդիսացան հրատարակութեան կասեցումին: «Երիտասարդ Հայ»ը ընդհանրապէս լոյս տեսած է 40 էջով, իսկ 1974 թ.ի թիւերուն մեծ մասը՝ 32 էջով (20·5×27·5 սմ.) :

Առաջին երկու տարիներուն խմբադրական կազմի անդամները հանդիսացած են՝ Անդրանիկ Վրդ. Կոսեան, Ժիրայր Դանիէլեան, Յովսէփ Մելքոնեան, Պետրոս Թերզեան, Լուիֆի Թապաքեան: Առաջին տարուան վերջերուն՝ խմբադրութեան միացած է նաեւ Ալեքսան Պերեճիբեան: Բաղմագոյն կողքով, պատկերազարդ այս թերթը ունեցած է քաղաքական, ընկերային, ազգային, տնտեսադիտական, արուեստներու (յատկապէս՝ սինեմարուեստ, նկարչութիւն), մարդական, երգիծական, ուսանողական եւ այլ բաժիններ: Յատուկ հետաքրքրութիւն կը ներկայացնեն թերթին հարցազրոյցները հայ եւ արաբ քաղաքական, կուսակցական դեկալմարներու, ինչպէս նաեւ հասարակական դործիչներու եւ մտաւորականներու հետ<sup>5</sup>:

Ե. Հ. ՄԱՐՁԱԿԱՆ (Պէյրութ, Լիբանան, 1973 թ.) – «Երիտասարդ Հայ»ի մարդական յաւելուած:

«Երիտասարդ Հայ»ը յատուկ ուշադրութիւն եւ խանդավառութիւն կը ցուցաբերէ մարդական (հայկական եւ միջազգային) կեանքին հանդէպ, առանձին բաժին յատկացնելով անոր: 1973 թ.ի ամբարան, մանաւանդ այն օրերուն երբ Երեւանի «Արարատ» ֆութպոլի խումբը բացառիկ արդիւնքներ կ'արձանագրէր, Ե. Հ.ի 82-րդ համարին զուգահեռ, առանձին պրակով լոյս կը տեսնէր նաեւ «Ե. Հ. Մար-

5. Հայկական Սովետական Հանրադիտարանի (Գ. հար., 1977, էջ 589) մէջ կը կարդանք. Ե. Հ. «Տպագրում է գրականագիտական, արուեստաբանական նիւթեր, արձակ եւ չափածոյ գործեր, քարգմանութիւններ արաբ. եւ եւրոպական գրականութիւնից, կինոյի տեսութիւններ, մարզական լուրեր»: Հարկ է նշել որ «արաբ. եւ հիւսիսային գրականութիւն»ներէ քարգմանութիւններ չկան Ե. Հ.ի էջերուն մէջ, իսկ «արձակ ու չափածոյ գործեր»ն ալ հագուադէպ երեւոյթներ են:

զական»ի առաջին համարը, 11 Օդոստոսի, 1973 թուականը: Մինչև Գեկտեմբերի 1-ը, լոյս տեսած են 7 թիւեր, առանձին պրակներով եւ էջաթիւերով (8-24 էջ), ապա՝ «Ե. Հ. Մարզական» յաւելւածը կրկին ընդգրկուած է Ե. Հ. ի էջերուն մէջ: Մարզական յաւելւածը խմբադրած են՝ Յակոբ Գարայեան, Չօհրայ Տէօքմէճեան եւ Ահարոն Պոյաճեան:

ԵԻ... (Նիկոսիա, Կիպրոս, 1972-73 թթ.) - Հրատարակութիւն Մեղրոնեան Կրթական Հաստատութեան Գ. դասարանի: Մեքենադիր-բաղմադրուած, առանց էջաթիւի (17×21 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբադրական կազմ, առաջնորդութեամբ՝ հայերէնի դասատու Մանուէլ Քէօսէեանի: Լոյս ընծայուած՝ 1972-73 կրթական տարեշրջանին, միայն երեք թիւ:

ՉԱՐԹՕՆԲ (Պոսթըն, Ա.Մ.Ն., 1972 թ.) - «Հայ Եկեղեցւոյ Չայն» ռատիոթատի պարբերաթերթ: Հայերէն-անգլերէն: 4-6 էջ (21.5×28 սմ.): Խմբադիր-հրատարակիչ՝ Արամ Աւագ Սարկաւազ Ստեփանեան:

ՉԷՅԹՈՒՆ (Հոռոմ, Իտալիա, 1980 թ.) - Հայկական մշակութային, քաղաքական երկամսաթերթ: Հրատարակութեան սկիզբ՝ 1980 թ. Յունիս: Հայերէն եւ իտալերէն: 8 էջ (28.5×33 սմ.):

ՉՈՒԱՐԹՆՈՅ (Պէյրութ, Լիբանան, 1970 թ.) - Պարբերաթերթ Հայ Աւետ. Գոլէճի Սուրբ Գիւրջի Ակումբի: Տարին թիւ մը, մեքենադիր-բաղմադրուած, 34-64 էջ (21×27.5 սմ.): Խորհրդատու՝ Վեր. Ա. Ս. Սարգիսեան:

ԷՐԵՖՈՒՆԻ (Լոնտոն, Անգլիա, 1980 թ.) - Ազգային, մշակութային, հասարակական ամսաթերթ: Հրատարակութեան սկիզբ՝ 1980 թ.ի Հոկտեմբեր: Հրատարակութիւն Լոնտոնի Թէքէեան Մշակութային Միութեան: Հայերէն եւ անգլերէն: 12 էջ (26×33 սմ.): Թէքեալոնտոնահայ թերթ՝ «Էրերունի»ն կը տպագրուի Մոնթրէալ, «Ապագայ»ի տպարանին մէջ:

«Էրերունի»ի հրատարակիչները իրենց նպատակները կը բանաձեւեն հետեւեալ տողերով.

«Չեանարկելով «Էրերունի» ամսագրի հրատարակութեան, մենք կը նպատակադրենք զայն դարձնել Լոնտոնահայութեան ձայնը: Մենք սկիտի զրազինք մասնաւորաբար դադութս եւ ընդհանուր առմամբ ամբողջ հայութիւնը շահազրկող հարցերով, վեր առնելով եւ դնահատելով ամէն ազդօգուտ եւ շինիչ աշխատանք, միեւնոյն ժամանակ վերապահելով մեզի իրաւունքը շինարար քննադատութեամբ մատնանշելու դադութիս թերիները, ինչպէս նաեւ դատապարտելու հայ ժողովուրդի զերաւոյն շահերուն հետ խոտոր համեմատող եւ վնա-

տակար զորձերը» :

ԷՐԵՅՈՒՆԻ (Միչիկըն, Ա.Մ.Ն., 1977 թ.) – Աշակերտական հանդէս Միչիկընի Հ.Բ.Ը. Միութեան Աւելք Մանուկեան Վարժարանի : Հայերէն եւ անգլերէն : Տարուերեւոյ էջեր՝ 12-28 (21·5×28 սմ.) : Հրատարակութեան սկսած է 1977-1978 թթ. կրթական տարեշրջանի սկիզբը : «Էրեւոնի»ի համարներուն թիւը մօտաւորապէս կը համապատասխանէ կրթական տարեշրջանի ամիսներու թիւին :

ԷՐԵՅՈՒՆԻ (Հուլայ, Սուրիա, 1978 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն Հ.Բ.Ը.Մ.ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Ուսանողական Բաժնի : Հրատարակութեան սկիզբը՝ 1978 թ.ի Յունուար : Խմբադրական կազմը յաճախ փոփոխութիւններ կը բերէ : 18-85 էջ (21×33 սմ.) : 1978-1979 տարիներուն լոյս տեսած է՝ «Պարբերաթերթ» անունով :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ (Տիթրոյթ, Ա.Մ.Ն., 1968 թ.) – էվէրէկ-Ֆէնէսի Մեսրոպեան-Ռուբինեան Ուսումնասիրաց Միութեան : 1968-1978 թուականներուն միջեւ լոյս ընծայուած են չորս «Ընդհանուր Տեղեկագիր»՝ 1966-1968, 1969-1971, 1972-1974, 1975-1977 շրջաններուն համար : Բացի առաջինէն, միւսները թուադրուած են՝ 2, 3, 4 : Հայերէն եւ անգլերէն : 30-74 էջ (20×26 սմ.) :

ԹԻՒԻԵԱՆԻ ՁԱՅՆ (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) – Աշակերտական հրատարակութիւն Վասան Թէքէեան Վարժարանի : Ա. թիւը լոյս տեսած է 1980 թ.ի Յունիսին : Աշակերտական շարադրութիւններ եւ ներքին կեանքի տեղեկութիւններ կը կազմեն թերթին բովանդակութիւնը : 32 էջ (17×24 սմ.) :

ԹՈՒԶՔ (Պէյրութ, Լիբանան, 1974 թ.) – Ուսանողական պարբերաթերթ Մեսրոպեան Վարժարանի (Կաթողիկէ) : Մեքենագիր-բազմադրուած : 13 էջ (21×33 սմ.) : 1974 թ.ին լոյս տեսած է 2 թիւ, առաջինը՝ տարեակգրին, երկրորդը՝ Ապրիլին :

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Նոր-Ջուղա, Պարսկաստան, 1979 թ.) – Հրատարակութիւն Հայ Ժողովրդական Ճակատի : Առաջին թիւը լոյս տեսած է 1979 թ.ի Մարտի 22-ին (21×27 սմ.) : Ընդամէնը՝ 9 թիւ :

Առաջին թիւի խմբադրականին մէջ կը կարգանք .

«Մենք հրատարակում ենք ԺՈՂՈՎՈՒՐԴը, պաշտպանելու համար մեր այն ժողովուրդին, որ արթնացել է տասնեակ տարիներին ից, . . . սկսել է հասկնալ իր վրայ զոյութիւն ունեցող ճնշումները՝ դրանք լինեն դատակարգային, հասարակական, ազգային կամ քաղաքական» :

ԻՄՅԱՐԱՆ (Գահիրէ, Եգիպտոս, 1975 թ.) – Ամսօրեայ պարբերագիրք : Խմբագիր-հրատարակիչ՝ Հայկ Ժամկոչեան կը ձեռնար-

կէ «Իմացարան»ի հրատարակութեան, «Հոկտեմբեր»ի խմբագրութեանէն հետնալէն ետք: Հրատարակութեան սկիզբը՝ 1975 թ.ի Մարտ: Կը զազրի 1978 թ.ի Յունիսին՝ 32-րդ սրահով: «Իմացարան»ը, շորս տարուան ընթացքին լոյս կը տեսնէ 32 սրահ, իւրաքանչիւրը 50 էջ (17.5×25 սմ.): Տարին՝ 8 սրահ, 400 էջ բազկացած հատոր մը: Բովանդակութիւնը՝ գրական, հասարակական, հրապարակագրական, զեղարուեստական, լրատուական են: Աշխուակիցներ՝ Յակոբ Շահնուր, Մկրտիչ Անդրանիկ, Ստեփան Շահագոյ, Վարուժան Երեւան (Գաղանճեան), Վահրամ Բրուտեան, են: Կը զազրի առանց արտօնազրի լոյս տեսնելուն պատճառով: Տարի մը ետք՝ 1979 թ.ի Յուլիսին եւ Օգոստոսին լոյս կը տեսնեն Երկու նոր թիւեր՝ գրքոյկի ձեւով եւ սրպէս «Մատենաշար Իմացարանի», թիւ 1 եւ 2: Նոյն պատճառներով, կը զազրի եւ «Մատենաշար»ը:

ԻՏԷԱԼ (Գորտոպա, Արժանթին, 1977 թ.) – Ամսաթերթ: Հրատարակութիւն Գորտոպահայ Գաղութային Միութեան Լրատու Յանձնախումբին: Երկտասարդներէ բազկացած խմբագրական կազմ: Մեքենազիր-բազմագրուած, առաջին թիւը լոյս տեսած է 1977 թ.ի Օգոստոսին: Հայերէն եւ սպաներէն:

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (Միւնիխ, Գերմանիա(?), 1968 թ.) – Անհատէ, անտոորազիր, անանուն քառածալ թերթիկ մը: Հայկադեան Գոյէճի Հայազիրտական Գրադարանը ունի 2 թիւ, որոնցմէ առաջինին վրայ գրուած է՝ «թիւ 1-2, Յունուար-Փետրուար», իսկ Երկրորդէն յայտնի կը դառնայ որ անոնք լոյս տեսած են՝ 1968 թ.ին. Բ. թիւին վրայ գրուած է՝ «թիւ 3-4, Մարտ-Ապրիլ 1968»: 16 էջ (11×15 սմ.): Բովանդակութեանէն դատելով կարելի է հետեւեցնել թէ ան լոյս տեսած է Միւնիխ, հակահամայնավար քարոզչութեան նպատակով: Տեւոյութիւնը՝ անձանթ:

ԼՈՆՏՈՆ (Լոնտոն, Անգլիա, 1974 թ.) – Ամսաթերթ: Պատասխանատու խմբագիրը՝ Ասատուր Կիւզէլեան: Հրատարակութեան սկիզբը՝ 1974 թ.ի Մարտ: Կը զազրի 24-րդ թիւով, 1976 թ.ի Մարտին: Առաջին 13 համարները կը տպագրուին Պէյրութ, տպ. Սեւան: Սկիզբը՝ միայն հայերէն, ապա՝ հայերէն եւ անգլերէն: 4 էջ (30×44 սմ.):

«Լոնտոն» իր ուղղութիւնը կը բանաձեւէ հետեւեալ բառերով.

««Լոնտոն» կուսակցութեան մը կամ կազմակերպութեան մը թերթը չէ, ոչ ալ հարկատու է որեւէ հատուածի:

«Քաղաքակիրթ Երկիրներու առաջին շարքին վրայ կանգնած հայրենիք մը ունինք:

«Ֆուենը նաև հայ սիլևոքը. դադթօճախներ՝ քիչ մը ամէն տեղ :

«Լոնտոն» կը հաւատայ որ հայ ժողովուրդի ոյժը, Հայու-թեան միասնականութիւնը կախուած է դադթօճախներու իրար՝ իսկ հայրենիքը դադթօճախներուն կապող կամուրջներու ամբուլթենէն» :

ԼՈՍ ՖԵԼԻՍԻ ՉԱՅՆ (Հոլիվուտ, Լոս Անճելըս, Ա.Մ.Ն., 1972 թ.) – Կրօնական, կրթական, դրական, բանասիրական: Հրատարակուած թիւն Լոս Ֆելիսի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի: Խրմ-բազիր՝ Ոսկան Վրդ. Մխիթարեան: Առաջին թիւը՝ 1972 թ.ի Սեպտեմբերին, 6 էջ (38×50 սմ.): Երկրորդ թիւ մը՝ 1972 թ.ի Հոկտեմբերին, կրկին 6 էջ, իսկ երրորդ թիւ մը՝ 1973 թուականով, 12 էջ: Վերջին երկու համարները լոյս տեսած են աւելի մեծ չափով (38×58 սմ.):

Թերթին բովանդակութիւնը կը կադմեն Հոլիվուտի Անթիլիասական թեմի (Կիլիկեան) պատակտումին հետ առընչուող նիւթեր: Արեւմտահայերէն եւ արեւելահայերէն:

ԼՈՒՍԱՅԱՅ (Պուէնոս Այրէս, Արժանթին, 1969 թ.) – Ազգային, մշակութային տեղեկատու ամսագիր: Հրատարակուած թիւն Հ.Բ.Լ.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանի վարչութեան: Հայերէն եւ սպաներէն: Առաջին թիւը՝ 1969 թ.ի Նոյեմբերին (17.5×26.2 սմ.):

ԼՈՒՍԱՂՔԻԻՐ (Բարիդ, Ֆրանսա, 1970 թ.) – Պարբերագիր. դրական-դեղարուեստական-դիտական: Նոր Շրջանի առաջին թիւը՝ Սեպտեմբեր-Նոյեմբեր 1970 թուակիր: Վերջինը՝ թիւ 4, Ապրիլ-Յունիս 1971 թուակիր: Հայերէն եւ Ֆրանսերէն: 48 էջ (18×26.7 սմ.): Պատասխանատու տնօրէն՝ Պարոյր-Պարէտ Էլէկեան: Փրանսերէն լատինի պատասխանատու՝ Շահան Էլէկեան:

«Լուսադրիւր»ի զանազան առաջադրանքները կ'ամփոփուին հետեւեալ տողերուն մէջ.

«Այսօր շատ աւելի զրպի է պակասը դրական լուրջ պարբերականի մը: Սիլևոքի հայ դրական անդատանին մէջ հետզհետէ կը դադրին դրականութեան եւ արուեստի նուիրուած պարբերականները...»

«Լուսադրիւրը սլիտի ջանանք դարձնել կամուրջ մը՝ Սովետական Հայաստանի եւ Սիլևոքի հայ զրողներու միջեւ»:

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ (Պրիթիչ Գոլոմպիա, Ա.Մ.Ն., 1971 թ.) – Եռամսեայ: Հրատարակուած թիւն Պրիթիչ Գոլոմպիայի Հայ Մշակութային Միութեան: Մեքենագիր-բաղմադրուած: Մեր տեսած թիւը՝ Նոյեմբերի 16, 1971 թուակիր, կը բաղկանայ 5 էջէ (22×35.5 սմ.):

ԼՐԱՏՈՒ (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) – Հրատարակուած թիւն

Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 50-ամեայ Արշաւի Յանձնախումբի: Պէյրութ, 1969, թիւ 1: Առանց էջաթիւի, կը բաղկանայ 12 էջէ (22×28 սմ.): Լոյս տեսած է միայն մէկ թիւ:

ԼՐԱՏՈՒ (Անթիլիաս, Լիրանան, 1971 թ.) - Հրատարակութիւն Համազգային Մշակութային Ընկերակցութեան Անթիլիասի Մասնաճիւղի: Առաջին թիւը՝ 1971 թ.ի Հոկտեմբերի 6-ին, երկրորդը՝ Դեկտեմբերի 15-ին, երրորդը՝ 1972 թ.ի Յունուարի 14-ին: Մեքենադիր-բաղմադրուած՝ 12-24 էջ (21·5×28 սմ.): Ապա՝ կը դադրի, վերերեւում համար 1973 թ.ի Հոկտեմբերին, այս անգամ տպագիր եւ փոքր ծաւարով՝ 40 էջ (17×23·5 սմ.): Խմբագրական կազմ:

ԼՐԱՏՈՒ (Պէյրութ, Լիրանան, 1973 թ.) - Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան (Հ.Ե.Բ.): Միայն երեք թիւ, լոյս տեսած՝ 1973 թ.ի Դեկտեմբերի 1-ին եւ 1974 թ.ի Յունուարի եւ Փետրուարի 1-ին: Մեքենադիր-բաղմադրուած, 12 էջ (10·5×27 սմ.): Խմբագիր՝ Արթուր Համալեան:

ԼՐԱՏՈՒ (Պուրճ Համուտ, Լիրանան, 1975 թ.) - Շարաթական հրատարակութիւն Ամանոսի Հայ Աւետ. Էմամնուէլ Եկեղեցիի: Մեքենադիր-բաղմադրուած: Խմբագիր՝ Վեր. Եսայի Սարմաղեան: 4 էջ (16·5×21 սմ.):

ԼՐԱՏՈՒ (Պէյրութ, Լիրանան, 1976 թ.) - Հրատարակութիւն Նոր Մարաշի Հայ Աւետ. Եկեղեցիի: Խմբագրական կազմ: Խմբագրութեան եւ հրատարակութեան պատասխանատու՝ Արամ Սարգիսեան: Առաջին թիւը՝ 1976 թուականի Դեկտեմբերին, իւրաքանչիւր ամիսը՝ թիւ մը: 12-16 էջ (17·5×25 սմ.): Միացեալ թիւով մը՝ 1979 թ.ի Մայիս-Դեկտեմբեր թուակիր, կը դադրի: Ապա՝ 1980 թ.ի Օգոստոսին կը վերահրատարակուի, այս անգամ՝ մեքենադիր-բաղմադրուած, որպէս շարաթական լրատու, Վաչէ Ատրուեհիի խմբագրութեամբ եւ անոր ծաւարով՝ 8-12 էջ (16·5×21 սմ.):

ԼՐԱՏՈՒ (Պէյրութ, Լիրանան, 1977 թ.) - Շարաթական հրատարակութիւն Պէյրութի Հայ Աւետարանական Ա. Եկեղեցիի: Մեքենադիր-բաղմադրուած: 4 էջ (16·5×21 սմ.): Առաջին թիւը՝ 1977 թ.ի Փետրուարի 6-ին: Խմբագիր՝ Վեր. Աբրահամ Սարգիսեան: 1979 թ.ի Հոկտեմբերի 7-էն սկսած, խմբագիր՝ Վեր. Յովհաննէս Գարճեան:

Այս՝ ինչպէս նախորդ երկու շարաթական «Լրատու»ները լոյս կը տեսնեն Կիրակի օրերը, եւ կը բաժնուին տուեալ եկեղեցիի ընտանիքներուն: Բովանդակութիւն. — Նոյն Կիրակի օրուան եկեղեցական պաշտամունքին մատուցուած պատգամ-քարոզի ամփոփումը, անցած շաբթուան ընթացքին եկեղեցիի տարբեր կազմակերպութիւն-

ներուն եւ յանձնախումբերուն կողմէ կազմակերպուած գործունէութեանց ամփոփ տեղեկագիրը, եկեղեցիին կից ու անոր սեփականութիւնը եզրղ դպրոցի մասին լուրեր, ծանուցումներ, մահազրուիւն, եւ այլն :

ԼՐԱՏՈՒ (Նիւ Եօրք, Ա.Մ.Ն., 1979 թ.) – Հրատարակութիւն Հ.Բ.Ը. Միութեան Սանուց Միութեան : Խմբագրական կազմ՝ Սէսիլ Բէշիշեան եւ Վարդգէս Թամզարեան : Ա. տարուան առաջին թիւը՝ 1979 թ.ի Ապրիլին : 4 էջ (21.5×27.5 սմ.) :

ԽԱԶԲՈՒՌ (Պէյրութ, Լիբանան, 1967 թ.) – Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային Գոլէճի Հայկական եւ Անգլիական Ակումբներու զբաղական ձեռնարկ : Մեքենագիր-բազմագրուած : Հայերէն եւ անգլերէն : Լոյս տեսած է մէկ թիւ, 1967 թ.ի Յունիսին : 44 էջ (21×27.5 սմ.) :

ԽՕՍՆԱԿ (Թորոնթոյ, Գանատա, 1979 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթոյի Մասնաճիւղին : Հրատարակութեան սկիզբ՝ 1979 թ.ի Յունիս : Պատասխանատու խմբագիր՝ Անդրանիկ Զիլինկիրեան :

ԽՕՍՆԱԿ ՊԱՏԱՆԵԿԱՆ (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) – Հրատարակութեան սկիզբին հանդիսացած է Հ.Բ.Ը.Մ.ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Զարեհ Նուսար Ակումբի Երէջ Սկանութներու պաշտօնաթերթը : Ապա՝ 1970 թ.ի Նոյեմբերի թիւէն սկսեալ՝ «Ուսանողական պարբերաթերթ» : Փաստօրէն, զոյգ պարագաներուն ալ, «Ոսնակ Պատանեկան»ը կը հանդիսանայ Հ.Բ.Ը.Մ.ի Պէյրութի պաշտօնաթերթ «Ոսնակ»ի երիտասարդական-պատանեկան թերթը : Խմբագիր՝ Զարեհ Թիւթիւնճեան : Առաջին թիւը՝ 1969 թ.ի Յունուարին : Լոյս տեսած թիւերուն գումարն է՝ 22 : Դադարած՝ 1975 թ.ի Յունիսին :

«Մեր Ընթերցողներուն» խորագրուած մուտքի մը մէջ, «Ոսնակ Պատանեկան»ի խմբագիրը կը յայտարարէ .

«Ահա՛ առիթ մը բոլորիս, որպէսզի Հայ պատանին, աղջիկ թէ մանչ, ըսէ իր խօսքը, տայ իր կարծիքը եւ մանաւանդ գիտնայ ըսել իր խօսքը» :

ԾԱՂԿԱՔԱՂ (Անթիլիաս, Լիբանան, 1977 թ.) – Գրական, գիտական, գեղարուեստական պարբերաթերթ Հ.Բ.Ը.Մ.ի Պողոս Գ. Կարմիրեան Վարժարանի : Մեքենագիր-բազմագրուած : 66 էջ (17×23 սմ.) :

ԾԱՆՕԹԱԳԻՐ (Բարիզ, Ֆրանսա, 1976 թ.) – Հրատարակութիւն Հայ Ուսանողաց եւ Երիտասարդաց Տեղեկատու Գրասենեակի : Առաջին համարը լոյս տեսած՝ 1976 թ.ի Ապրիլին : Հայերէն-Ֆրանս-

սերէն: Մեքենագիր-բազմադրուած՝ 16 էջ (15×21 սմ.): Առաջին համարի մէջ, «Հայ Ուսանողներուն եւ Երիտասարդներուն» ուղղուած խօսքին մէջ, կը կարդանք.

«Մանօթագիր»ը պիտի հրատարակուի ընդհանրապէս ամիսը անդամ մը, իսկ անհրաժեշտ նկատուած պարբերներուն աւելի կարճ ժամանակամիջոցի մը մէջ»:

ԾԻԱԾԱՆ (Միշիգըն, Ա.Մ.Ն., 1974 թ.) – Պարբերագիրք Հ. Բ.Ը.Մ.ի Սանուց Միութեան: Խմբագիր՝ Գոհար Մելքոնեան: 1974 թ.էն սկսեալ՝ տարին թիւ մը: 30-74 էջ (20×26, ապա՝ 21×28 սմ.):

Գրականութեան եւ արուեստի նուիրուած էջերու կողքին, յուշադրութիւններ եւ միութեանական տեղեկութիւններ տեղ գտած են բովանդակութեան մէջ: Յարդ լրջ տեսած է 5 թիւ:

ԾԻԱԾԱՆ (Վալանս, Ֆրանսա, 1979 թ.) – Երկամսեայ տեղեկատու Վալանսի եւ շրջակայքի Հայ Առաքելական Եկեղեցիի: Խմբագրական կազմ՝ Նարեկ Քահանայ Վարդանեան, Մանուկ Ստեփանեան, Մարք Գոհարեան, Հանրի Սիրանեան, Ժիւլիէն Վարդանեան: Ֆրանսերէն եւ հայերէն: Միացեալ թիւը՝ 6-7-ը կը բաղկանայ 30 էջէ (21×30 սմ.):

ԾԻՌԵՆՆԱԿ (Քուէյթ, 1979 թ.) – Պարբերաթերթ Քուէյթի Հայ Ազգային Երկրորդական Վարժարանի: 1978-1979 կրթական տարեշրջանին լոյս կը տեսնէ առաջին թիւը (1979 թ.): 63 էջ (22×28.5 սմ.): Աչակերտներէ բաղկացած խմբագրական կազմ: Պատասխանատու ուսուցիչ՝ Յակոբ Սահակեան:

ԿԱՆՁ (Պէյրութ, Լիբանան, 1971 թ.) – Շարաթաթերթ: Քաղաքական, հասարակական եւ դրսեկան: Հրատարակութեան սկիզբ՝ 1971 թ.ի Փետրուարի 20: Ծաւալ՝ 8 էջ (30×40 սմ.): Օրինականօրէն լոյս կը տեսնէ որպէս Լիբանանեան «Ալ-Նիտէ» (օրկան Լիբանանի Համայնալար Կուսակցութեան) թերթի յանդիւրած: Խմբագրութեան պատասխանատու՝ Յարութիւն Մատէեան: Վարչական պատասխանատու՝ Պօղոս Թիւթիւնճեան: «Կանչ»ը կարելի է համարել Լիբանանահայ համայնալարներու օրկանը: Մնայուն աշխատակիցներ՝ Գառնիկ Աղաբաբեան, Արմէն Դարեան, Պարոյր Երէցեան, Մարտիրոս Գուշաքճեան եւ այլք: Առաջին թիւի «Մեր Խօսքը» խմբագրականով, «Կանչ»-ի ուղղութեան անդրադառնալով, նաեւ կը գրէ.

«Հայրենասէր բոլոր ուժերուն հետ միասին աւելի ընդարձակել, տարածուն դարձնել, զարդացնել եւ ամրացնել Սփիւռքի հայութեան մշակութային կապերը Մայր Հայրենիքի հետ: Լրիւ դարձնել հայութեան համախմբումն ու ազգային միասնականութիւնը՝ Սովետական Հայաստանի շուրջ, որ Մայր Հայրենիքն է բոլոր հայերուն»:

ԿՍՐՄԻՔ (Բարիզ, Ֆրանսա, 1973 թ.) – «Կը հրատարակուի ամիսը անգամ մը»։ Տնօրէն–խմբագիրը՝ Լեոն Զորմիսեան։ Հրատարակութեան սկիզբը՝ 1973 թ.ի Յունուար։ Դադարած՝ Գ. տարուան (1975 թ.) Սեպտեմբեր–Հոկտեմբեր միացեալ թիւով (թիւ 9–10)։ Զորմիսեանի «Կարծիք»ը անհատական ձեռնարկ մըն է, ուր ընկալելով հանգերձ կարգ մը մտաւորականներու յօդուածները (Գ. Ֆէնէր–ձեան, Եղիշէ Այվաղեան, Լեոն Սոփոկլեան), ընդհանրապէս ինք կը լեցնէ թերթին էջերը, օդտազործելով զանազան ծածկանուններ։ 8 էջ (29.5×45 սմ.)։ Թերթը տպագրուած է Պէյրութ, տպ. Տօնիկեան։

Իր ուղղութեան մասին՝ «Կարծիք» կը գրէ․

«Իւրաքանչիւր հատուածի յատուկ թերթեր կան...։ Գոյութիւն չունի որեւէ թերթ, որ այդ հատուածներէն դուրս եւ անկախ, անոնց հետ առանց նիւթական եւ բարոյական կապ ունենալու, քննէր հայ կեանքի ինդիւրները մտածման ամբողջական ազատութեամբ, ճշմարիտը, բանաւորը եւ օգտակարը միայն արտայայտելու դիտաւորութեամբ։

«Մեր մտածումէն երբեք պիտի չհեռացնենք Հայութեան մի եւ ամբողջական ազգութիւն մը ներկայացնելու իրողութիւնը։

«...Անոր վրայ հիմնուած է ու պիտի մնայ մեր վերաբերումը նաեւ հայրենիքին հանդէպ։ Այս պատճառով ալ Հայրենիք–Սփիւռք յարաբերութիւնը մեր օրերուն, առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող հարցը կը ներկայացնէ»։

ԿԵԱՆՔ ԵՒ ՅՈՅՍ (Բարիզ, Ֆրանսա, 1976 թ.) – Եռամսեայ Տեղեկատու։ Հրատարակութիւն Աղքատախնամի Վարչութեան։ Հայերէն–Ֆրանսերէն։ Առաջին թիւը՝ Ապրիլ–Յունիս 1976 թուակիր։ Թիւ 3–4 միացեալը՝ 12 էջ (25×32 սմ.)։ Հրատարակութեան Տնօրէն՝ Մ. Յ. Մարտիրոսեան։

ԿԻՊՐԱՀԱՅ ՏԵՂԵԿՍՈՒ (Նիկոսիա, Կիպրոս, 1978 թ.) – Ամսական լրատու Ազգային Առաջնորդարանի։ Խմբագիր՝ Զարեհ Վրդ. (այժմ՝ Եպիսկոպոս) Ազնաւորեան։ 10–50 էջ (21×33 սմ.)։ Հրատարակութեան սկիզբը՝ 1978 Յունուար։

ԿՐԸՆՈՊԼԻ ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ ԼՐԱՏՈՒ (Կրժնովլ, Ֆրանսա, 1978 թ.) – Եռամսեայ հրատարակութիւն Կրժնովլի Հայ Ակումբին, որուն նախադասն է Եղուարդ Մանուկեան։ Հրատարակութեան տնօրէն՝ Ժ. Մարանձեան։ Հրատարակութեան սկիզբը՝ 1978 թ.ի Յունուար։ Տարին՝ չորս թիւ։ 8–20 էջ (21×30 սմ.)։ Ֆրանսերէն, միայն մէկ էջ հայերէն։

**NEW ARMENIAN PERIODICALS OF  
THE ARMENIAN DIASPORA (1967-1980)**

**JIRAIR TANIELIAN**

**(Summary)**

In the last decade approximately two hundred new periodicals started to be published in the Armenian Diaspora, specially in U.S.A., Europe, Iran and even in some African countries. The reasons behind this movement are: the new waves of Armenian migration from the Middle East to Europe and U.S.A.; the revolutionary tendencies among the Armenian new generation, specially after the 50th anniversary commemoration of the Armenian Genocide in 1965; the revolution in Iran; and the trend of returning to the Armenian national roots.

The list of the new periodicals has been prepared in alphabetical order, and only the first part is presented in this article. The second part will be published in the next issue of the Review.